ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՓՈՔՐ ՍԵՊԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

« 16 » դեկտեմբերի 2015թ　　　　　　　　　　գյուղ Փոքր Սեպասար

21

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ֆ.ՑՈՂԱԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ցոլակյան

Ձեզ է ներկայացվում ՀՀ Շիրակի մարզի Փոքր Սեպասար համայնքի 2015 թվականի դեկտեմբեր ամսվա 16 Ն, 17 Ն, 18 Ն, 19 Ն, 20 Ն որոշումները:
Առդիր «5» թերթ:

Հարգանքներով

Փոքր Սեպասար համայնքի ղեկավար　　　　　　Ջ.Բդոյան

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
Մուտք թիվ 11431-15
16 12 2015թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՓՈՔՐ ՍԵՊԱՍԱՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

<< 14>>դեկտեմբերի 2015թ

ՀՀ Շիրակի մարզ, գյուղ Փ.Սեպասար

# ՈՐՈՇՈՒՄ 16-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՓՈՔՐ ՍԵՊԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Փոքր Սեպասար համայնքի ավագանին

Որոշում է`

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Փոքր Սեպասար համայնքի 2016 թվականի բյուջեն:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ`

Կողմ` 3 Դեմ` 0 Ձեռնպահ` 0

Ս.Բաղդասարյան կողմ

Ա.Բրոյան կողմ

Ռ.Մելիքյան կողմ

*Փոքր Սեպասար համայնքի ղեկավար`* *Ջ.Բրոյան*

<< 14>> դեկտեմբերի 2015 թվական
գյուղ Փոքր Սեպասար

ՀԱՎԵԼՎԱԾ
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Փոքր Սեպասար համայնքի
ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 14-ի
թիվ 16-Ն որոշման

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՓՈՔՐ ՍԵՊԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ

### ԵԿԱՄՏԱՅԻՆ ՄԱՍ

| Հ/Հ | Եկամուտներ | Ընդամենը /հազար դրամ/ |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| 1 | Հողի հարկ | 393,7 |
| 2 | Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վճարներ | 850,0 |
| 3 | Գույքային հարկեր անշարժ գույքից | 5,0 |
| 4 | Դոտացիա | 3500,0 |
| 5 | Գույքահարկ փոխադրամիջոցների համար | 369,0 |
| | Ընդամենը եկամուտներ | 5117,7 |

Փոքր Սեպասար համայնքի ղեկավար Ջ.Բդոյան

## ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐ

| Հ/հ | Անվանումներ | Հոդված | Ընդամենը /հազար դրամ/ |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| 2 | Աշխատողների աշխատավարձերի և հավելավճարներ | 4111 | 4620,0 |
| 3 | Էլեկտրաէներգիայի ծախս | 4212 | 50,0 |
| 4 | Գործուղումներ | 4221 | 20,0 |
| 5 | Հատուկ նպատակային այլ նյութեր | 4269 | 57,7 |
| 6 | Պահուստային միջոցներ | 4891 | 370,0 |
|  | Ընդամենը ծախսեր |  | 5117,7 |

Փոքր Սեպասար համայնքի ղեկավար Զ.Բդոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՓՈՔՐ ՍԵՊԱՍԱՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

<< 14>>դեկտեմբերի 2015թ. ՀՀ Շիրակի մարզ, գյուղ Փոքր Սեպասար

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ-17 Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՓՈՔՐ ՍԵՊԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, 27-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետի դրույթներով, համայնքի ավագանին

որոշում է

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Փոքր Սեպասար համայնքի ղեկավարի 2016 թվականի պաշտոնային դրույքաչափը սահմանել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի պաշտոնային դրույքաչափի նկատմամբ 22.67%-ի չափով՝ 150.000 (մեկ հարյուր հիսուն հազար դրամ):
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Փոքր Սեպասար համայնքի ավագանու 2015թվականի հունիսի 30-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Փոքր Սեպասար համայնքի ղեկավարի 2015 թվականի վարձատրության չափը փոփոխելու մասին» թիվ 7 որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ-3 Դեմ-0 Ձեռնպահ-0

Ա. Բրոյան ՝ կողմ
Ս. Բաղդասարյան ՝ կողմ
Ռ. Մելիքյան ՝ կողմ

*Փոքր Սեպասար համայնքի ղեկավար՝* *Ջ.Բրոյան*

«14» դեկտեմբերի 2015 թվական
գյուղ Փոքր Սեպասար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՓՈՔՐ ՍԵՊԱՍԱՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

<< 14>>դեկտեմբերի 2015թ ՀՀ Շիրակի մարզ, գյուղ Փ.Սեպասար

# ՈՐՈՇՈՒՄ N 18-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՓՈՔՐ ՍԵՊԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի դրույթով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Փոքր Սեպասարի համայնքի ավագանին

որոշում է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Փոքր Սեպասարի համայնքի սեփականության 2016 թվականի գույքագրման փաստաթղթերը՝ համաձայն հավելվածի:

Ավագանու անդամներ՝

Կողմ՝ 3 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

Ս.Բաղդասարյան կողմ

Ա.Բդոյան կողմ

Ռ.Մելիքյան կողմ

*Փոքր Սեպասար համայնքի ղեկավար՝* *Ջ.Բդոյան*

<< 14 >> դեկտեմբերի 2015 թվական
գ. Փոքր Սեպասար

ՀԱՎԵԼՎԱԾ
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Փոքր Սեպասարի համայնքի
ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 14-ի
թիվ 18-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՓՈՔՐ ՍԵՊԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

| № | Գույքի անվանումը | Չափի միավոր | Քանակ |
|---|---|---|---|
| *1* | *2* | *3* | *4* |
| 1 | Գրականություն | հատ | 1390 |
| 2 | Սեղան | հատ | 4 |
| 3 | Աթոռներ | հատ | 12 |
| 4 | Համակարգիչ | հատ | 1 |

Փոքր Սեպասար համայնքի ղեկավար՝ Ջ.Բրդյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՓՈՔՐ ՍԵՊԱՍԱՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

<< 14>>դեկտեմբերի 2015թ ՀՀ Շիրակի մարզ, գյուղ Փոքր.Սեպասար

# ՈՐՈՇՈՒՄ Թիվ-19 Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՓՈՔՐ ՍԵՊԱՍԱՐԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 17-Ի ԹԻՎ 2 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի, 31-րդ հոդվածի 4-րդ մասի, «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի, 1-ին կետի «բ» ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 55-Ա հրամանը, համայնքի ավագանին

**որոշում է**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Փոքր Սեպասարի_գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների քանակը՝ 2 :
2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Փոքր Սեպասարի_գյուղապետարանի աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Փոքր Սեպասար համայնքի ավագանու 2015 թվականի հունվարի 17-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Փոքր Սեպասարի գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների 2015 թվականի քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 2 որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ-3 Դեմ-0 Ձեռնպահ-0

Ա. Բդոյան ՝ կողմ
Ս. Բաղդասարյան ՝ կողմ
Ռ.Մելիքյան ՝ կողմ

*Փոքր Սեպասար համայնքի ղեկավար՝* *Ջ.Բդոյան*

«14» դեկտեմբերի 2015 թվական
գ. Փոքր Սեպասար

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի
Փոքր Սեպասար համայնքի ավագանու 2015 թվականի
դեկտեմբերի 14-ի թիվ 19 -Ն որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՓՈՔՐ ՍԵՊԱՍԱՐԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

| Հ/h | Պաշտոնի անվանումը | Հաստիքի քանակը | Պաշտոնային դրույքաչափը (դրամ) | Պաշտոնային դրույքաչափի տոկոսաչափը համայնքի ղեկավարի պաշտոնային դրույքաչափի նկատմամբ (%) | Սահման-ված դրույքը | Սահմանված դրույքաչափը (դրամ) | Ընդամենը (դրամ) |
|---|---|---|---|---|---|---|---|
| Համայնքային ծառայության պաշտոններ | | | | | | | |
| 1 | Աշխատակազմի քարտուղար | թափուր | 79000 | 52.66 | 1 | 79000 | 79000 |
| 2 | Առաջատար մասնագետ-հաշվապահ | 1 | 78000 | 52.00 | 1 | 78000 | 78000 |
| 3 | Համակարգչային օպերատոր | 1 | 77904 | 51.93 | 1 | 77904 | 77904 |
| Ընդամենը | | 3 | 234904 | - | 3 | 234904 | 234904 |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ժիվան Բդոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՓՈՔՐ ՍԵՊԱՍԱՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ

<< 14>>դեկտեմբերի 2015թ                                                                  գյուղ Փոքր Սեպասար

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 20-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՓՈՔՐ ՍԵՊԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ, 10-րդ, 11-րդ հոդվածների, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետի դրույթներով, համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Փոքր Սեպասար համայնքի վարչական տարածքում 2016 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը:
2. Ուժը կորցրած ճանաչել «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Փոքր Սեպասար համայնքի վարչական տարածքում 2015 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» թիվ 2 որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

Կողմ-3,          դեմ-0 ,       ձեռնպահ-0

Ազնաուր Բդոյան          կողմ

Սարգիս Բաղդասարյան   կողմ

Ռուբիկ Մելիքյան          կողմ

*Փոքր Սեպասար համայնքի ղեկավար*          *Ջ.Բդոյան*

<< 14>> դեկտեմբերի 2015 թվական
գյուղ Փոքր Սեպասար

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Փոքր Սեպասարի համայնքի
ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 14-ի
թիվ 20-Ն որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՓՈՔՐ ՍԵՊԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

## Տեղական տուրքերի դրույքաչափեր

| Հ/Հ | Տեղական տուրքի տեսակը | Համայնքի ավագանու կողմից սահմանված դրույքաչափը |
|---|---|---|
| 1. | Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝<br>հիմնական օբյեկտների համար՝ | |
| | ա) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ | 4000 (չորս հազար) դրամ |
| | բ) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝ | |
| | բա) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ | 6000 (վեց հազար) դրամ |
| | բբ) 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ | 12000 (տասներկու հազար) դրամ |
| | բգ) 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ | 12000 (տասներկու հազար) դրամ |
| | բդ) 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ | 25000 (քսանհինգ հազար) դրամ |
| | ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝ | |
| | գ) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ | 700 (յոթ հարյուր) դրամ |
| | դ) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ | 1200 (մեկ հազար երկու հարյուր) դրամ |

| | | |
|---|---|---|
| 2. | Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝ | |
| | ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ | 700 (յոթ հարյուր) դրամ |
| | բ) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով. | |
| | գ) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը: | |
| 3. | Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է. | 1500 (մեկ հազար հինգ հարյուր) դրամ |
| 4. | Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝ | |
| | 1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ | 10000 (տասն հազար) դրամ |
| | 2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ | |

| | | |
|---|---|---|
| 5. | Համայնքի տարածքում՝ | |
| | ա) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար՝ մեկ քառակուսի մետրի համար | 250 (երկու հարյուր հիսուն) դրամ |
| | բ) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է | 150000 (մեկ հարյուր հիսուն հազար) դրամ |
| | գ) խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է | 40000 (քառասուն հազար) դրամ |
| | գա) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝ | |
| | հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ | 5000 (հինգ հազար) դրամ |
| | ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ | 800 (ութ հարյուր) դրամ |
| | դ) Համայնքային սեփականությունը հանդիսացող ընդհանուր օգտագործման փողոցներում կազմակերպված վճարովի ավտոկայանատեղերում ավտոտրանսպորտային միջոցը կամ դրա կցորդը կայանելու համար տեղական տուրքը սահմանվում է. | |
| | դա) յուրաքանչյուր մեկ ժամվա համար՝ | 200 (երկու հարյուր) դրամ |
| | դբ) յուրաքանչյուր մեկ օրվա համար՝ | 1500 (մեկ հազար հինգ հարյուր) դրամ |
| | դգ) մեկ շաբաթվա համար՝ | 3000 (երեք հազար) դրամ |
| | դդ) մեկ ամսվա համար՝ | 15000 (տասնհինգ հազար) դրամ |
| | դե) մեկ տարվա համար՝ | 70000 (յոթանասուն հազար) դրամ |
| $5^1$ | Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր տարվա համար | 40000 (քառասուն հազար) դրամ |

| | | |
|---|---|---|
| 6. | Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ | |
| | ա) առևտրի օբյեկտների համար՝ | 30000 (երեսուն հազար) դրամ |
| | բ) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ | 80000 (ութսուն հազար) դրամ |
| | գ) բաղնիքների (սաունաների) համար՝ | 200000 (երկու հարյուր հազար) դրամ |
| | դ) խաղատների կազմակերպման համար՝ | 900000 (ինը հարյուր հազար) դրամ |
| | ե) շահումով խաղերի կազմակերպման համար՝ | 300000 (երեք հարյուր հազար) դրամ |
| | զ) վիճակախաղերի կազմակերպման համար՝ | 110000 (մեկ հարյուր տաս հազար) դրամ |
| 7. | Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝ | |
| | ա) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ | 2000 (երկու հազար) դրամ |
| | բ) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ | 3000 (երեք հազար) դրամ |
| | գ) այլ արտաքին գովազդի համար՝ | 1300 (մեկ հազար երեք հարյուր) դրամ |
| | դ) դատարկ գովազդային վահանակների համար՝ | 600 (վեց հարյուր) դրամ |
| 8. | Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է | 3000 (երեք հազար) դրամ |
| | Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է | 70000 (յոթանասուն հազար) դրամ |

| | | |
|---|---|---|
| 9. | Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է | 5000 (հինգ հազար) դրամ |
| 9.1. | Համայնքի տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ իրականացնելու և (կամ) մատուցելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է | 300000 (երեք հարյուր հազար) դրամ |
| 10. | Համայնքի տարածքում մասնավոր գերեզմանատան շահագործման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր տարվա համար՝ | 2500000 (երկու միլիոն հինգ հարյուր հազար) դրամ |
| | ա) 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ | 5000000 (հինգ միլիոն) դրամ |
| | բ) 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ | 7000000 (յոթ միլիոն) դրամ |
| | գ) 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ | 10000000 (տաս միլիոն) ՀՀ դրամ |
| | դ) 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ | 2500000 (երկու միլիոն հինգ հարյուր հազար) դրամ |

*Տեղական վճարների դրույքաչափեր*

| Հ/Հ | Տեղական վճարներներ տեսակները | Համայնքի ավագանու կողմից սահմանված տեղական վճարի դրույքաչափը |
|---|---|---|
| ա) | Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտական ակտի ձևակերպման համար, ինչպես նաև շահագործման թույլտվություն տրամադրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար. | 100000 (մեկ հարյուր հազար) դրամ |
| բ) | Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում | 100000 (մեկ հարյուր հազար) դրամ |

| | | |
|---|---|---|
| | *անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝* տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար. | |
| գ) | Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցներից վճար. | 1000 (մեկ հազար) դրամ |
| դ) | Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աղբահանությունը կազմակերպելու համար՝ աղբահանության վճարը սահմանվում է. | |
| | կենցաղային աղբի համար՝ | |
| | դա) ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար յուրաքանչյուր ամիս՝ | 50 (հիսուն) դրամ |
| ե) | Շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տրամադրվող թույլտվության վճար. | |
| | ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝ | |
| | եա) ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ | 1000 (մեկ հազար) դրամ |

*Փոքր Մեսրոպ համայնքի ղեկավար՝* *Ջ.Բդոյան*